**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

17.09 2018թ.
ժամը $10^{15}$

**Մասնակցում էին՝**
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռուստյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիք-լվացքատնային սպասարկման բաժանմունքի ավագ ինժեներ, կապիտան Վ. Բարսեղյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Գևորգյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Գ.Գևորգյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

---

(Գ.Գևորգյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար գլխարկների և ուսադիրների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «ԳԴԱԿ» ՍՊԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Գ.Գևորգյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

(Գ.Գևորգյան)

3.1 Գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

| Հ/հ | Ապրանքի անվանումը | Հ/մ | Քանակը | Նախահաշվային գումարը | 1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության | | | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գինը | | անվանումները | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | Ընդհանուր | | առանց ԱԱՀ | Ընդհանուր |
| 1 | գլխարկներ /Գլխարկ՝ տոնական կիսաբրդյա սև գույնի/ | հատ | 125 | 562500 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 468750 | 562500 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 468750 | 562500 |
| 2 | գլխարկներ /Գլխարկ՝ կիսաբրդյա, գեներալական/ | հատ | 5 | 235000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել | | | | | |
| 3 | ուսադիր /Ուսադիր կուրսանտական կազմի կարովի, կապույտ դաշտով/ | զ-գ | 100 | 60000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել | | | | | |
| 4 | ուսադիր /Ուսադիր սաների համար/ | զ-գ | 600 | 408000 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 339000 | 406800 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 339000 | 406800 |
| 5 | ուսադիր /Ուսադիր կուրսանտական կազմի հանովի, կապույտ դաշտով/ | զ-գ | 100 | 60000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել | | | | | |
| 6 | ուսադիր /Ուսադիրներ գեներալ-լեյտենանտի վերնաշապիկի/ | զ-գ | 15 | 270000 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 225000 | 270000 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 225000 | 270000 |
| 7 | ուսադիր /Ուսադիրներ գեներալ-մայորի տոնական/ | զ-գ | 10 | 270000 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 225000 | 270000 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 225000 | 270000 |
| 8 | ուսադիր /Ուսադիրներ գեներալ-մայորի վերնաշապիկի/ | զ-գ | 30 | 360000 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 300000 | 360000 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 300000 | 360000 |

3.2 Մասնակցի գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ 1-ին, 4-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար հայտ է ներկայացրել հրավերի պայմաններին բավարարող միայն մեկ մասնակից, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 17.09.2018թ. մասնակցին ծանուցվել է, որ գների նվազեցման նպատակով 20.09.2018թ. ժամը 12:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՔՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) նշանակված էին բանակցություններ: Բանակցություններին ներկայացել է «ԳԴԱԿ» ՍՊԸ տնօրենը և բանակցությունների ընթացքում 1-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժինների համար իր կողմից ներկայացրած գնային առաջարկները նվազեցրել է՝ սահմանելով համապատասխանաբար 556500, 403200 և 265500 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, իսկ 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար իր կողմից ներկայացրած գնային առաջարկները թողել է անփոփոխ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Գ.Գևորգյան)

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 20.09.2018թ., «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-ին, 4-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Գ.Գևորգյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Գ.Գևորգյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Գնահատող** Հ. Մելիքյան

**Գնահատող** Վ. Պապյան

**Գնահատող** Գ. Ուխտյան

**Գնահատող** Վ. Բարսեղյան

**Գնումները համակարգող** Գ. Գևորգյան

20.09.2018թ.